

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻԻ

ՄՇԱԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

«Մշակի» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղդարայայ և Բարձրակայա փողոցն. անկիւն):
Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարութիւնները ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համակրելի քառանկյունաձև. Անալառ քրի-
ստոնիս ենք պահանջում. Բիսմարկ. — ՆԵՐԿԱՅ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դիտար է հաւատար. Միսսր Ալ-
լէն. Նամակ Գանձակի գաւառից. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Պատերազմ. Արտաքին լուրեր. — ՀԵՒՈՒ-
ԿԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Դպրոցական յիշատակներ:

ՀԱՄԱԿՐԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԱՆ

Քառանկյուն տարի սրանից առաջ, Անգ-
լիայի Կեմբրիջ քաղաքում, սկիզբ դրվեց մի
համակրելի գործի, որ այժմ տարածվել է
բոլոր լուսաւորված երկրներում: Մենք
խօսում ենք «Ժողովրդական համալսարան»
կոչված հիմնադրութեան մասին: Կեմբրիջի
համալսարանի նախկին սաների
մի խումբ, ոգևորված պրոֆեսոր Ստեփան-

տի ազգու և համագեղցուցիչ պրոպագան-
դայից, որոշեց փորձ փորձել գիտութիւնը
Ժողովրդականացնելու և մատչելի
դարձնելու ազգայնական հասարակ
դասակարգի համար: Պրոֆեսորական շրջ-
անն ընդհանրապէս համակրութեամբ չէր
վերաբերվում նոր գործին և չէր հաւա-
տում նրա աջողութեան: Փորձը, սակայն,
անսպասելի, միայնակ հետեւեցին
տուեց. Ժողովրդի համար կարգաւորած դա-
սախօսութիւնները մեծ համակրութիւն
գտան և այնպիսի հետաքրքրութիւն դար-
ձեցին, որ ուրիշ համալսարանական քա-
ղաքներ ևս, իսկ յետոյ և փոքր քաղաքնե-
րի մի խումբ, միացան այդ նոր շարժման,
որ յայտնի դարձաւ մամուլի և գրականու-
թեան մէջ համալսարանի ընդարձա-
կում: University extension անունով: Մի-
այն Կեմբրիջի համալսարանի Ժողովրդա-
կան բաժինը կարողացաւ այս 25 տարեկան
ընկալելու միայն 30 հազար վկայական:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԹԻՇԱՏԱԿՆԵՐ

Սիրելի ընկեր!
Ուղիղ 20 տարի առաջ յաճախում էի Ա...
քաղաքի խալիֆայական դպրոցներից մէկը. սրա
կազմութիւնն արդէն յայտնի լինելով՝ աւելորդ
եմ համարում մանրամասն պատմել: Ինչ կարե-
ւի էր սովորել, երբ մի և նոյն սենեակում հա-
ւաքված էին 7—20 տարեկան տղաներ: Իւրա-
քանչիւրը բարձրաձայն կարգում ու սերտում էր
իր դասը. մի այնպիսի աղմուկ էր առաջ գա-
լիս, որ ակամայ էր խլացնում: Այնտեղ եղած
ֆիզիկական սոսկալի պատիժները բոլորի մէջ
առաջ էին բերում զգուշացնելու ու ատելութիւն
դէպի հիմնարկութիւն: Ձր կար մի աշակերտ,
որ շարժական մի քանի անգամ դպրոցից չը
փախչէր: Ումանց ծնող, ուրիշներին ծնողների
կողմից ստեղծ միջոց ու զանազան խոստում-
ները մղում էին դէպի սպանդանոց. բայց դը-
րանց պէժ տեսնում էր երկու երեք օր: Դարձեալ
դպրոց գնալով, կամ աւելի լաւ է ասել՝ դպրո-
ցի անուն կրող այդ թիւրքական բանտը մտնե-
լով՝ իսկոյն զարթնում էր մի և նոյն զգուշացնելու
ու ատելութիւնը. կրկնվում էր ծնողի, միջոց ու
զանազան խոստումների պատմութիւնը: Ինչ
ասեմ, այժմ այդ բոլորն աչքի առաջ բերելով,
սիրտս տրաքվում է. հիմա եմ հասկանում, որ
կրթական գործում մատաղ սերունդին չէ կարող
գրաւել ոչ մի խոստում, ոչ մի վարձատրութիւն,
իսկ ծնող ամենամեղադրականացնող տարրն
է: Միակ ճշմարիտ մղող ոյժը, միակ դրաւոր,
մատաղ սերունդին անընդհատ առաջ տանող
ճանապարհն այն է, որ կրթութեան ընթացքը
համապատասխան լինի անհատի զարգացման
ատիւններին, բաւականութիւն տալ նրա հետա-
քրքրութեանը, ներքին ու արտաքին մատակարար
անհատի մտքին ու սրտին: Առաջին, ծնողների

խրատումներն ու քաղցր հայեացքը յարմար
դէպքում ամենալաւ վարձատրութիւնն է, իսկ
ընդհակառակը սառն փրաքներումը՝ ամենա-
խիստ պատիժը...
Խալիֆայական դպրոցում մնացի մի տարի,
թէ աւելի, լաւ չեմ յիշում: Այդ ժամանակամի-
ջոց տանջանք ու մահ էր ինձ համար: Բարե-
բախտաբար մեր դրացու որդին յաճախում էր
Ա... քաղաքի ծխական կամ ինչպէս այն ժա-
մանակն էին ասում՝ հոգեւոր ուսումնարանը:
Մի տարվայ ընթացքում համեմատաբար անա-
գիւն առաջադիմութիւն էր արել գրել-կարդալու
և ուրիշ առարկաների մէջ, որոնց մասին մա-
ղաչափ անգամ դադափար չունէի: Բայց եւ ոչ
էլ ընկերներս: Իմ համեմատութեամբ նա փրկու-
սօփայ էր. բարի նախանշը հանգիստ չէր տա-
լիս ինձ: Տարվայ որ ամիսն էր, չը գիտեմ.
միայն մտաբերում եմ, որ ձմեռ էր: Մի օր ար-
տասուքն աչքիս աղաչում պաղատում էի ծնող-
ներիս ինձ հոգևոր ուսումնարանը տալու: Կարճ
ժամանակից յետոյ խնդրեալ կատարվեց. մտայ
հոգևոր ուսումնարանը: Խալիֆայական դպրոցի
հետ համեմատած հոգևոր ուսումնարանն ինձ
համար կատարեալ դրախտ ու կրթական գոր-
ծում իղէալ էր կազմում. որովհետեւ աւելի
բարձր ու կանոնաւոր դպրոցական կազմակեր-
պութեան մասին գաղափար չունէի: Չափազանց
գոհ էի իմ վիճակից: Տեսնում էի մի սենեակում
հաւաքված հասակակից տղաներ, բոլորը միասին
սովորում էին մի և նոյն բանը: Դասարանում
կար կարգապահութիւն. մեզանից իւրաքանչիւրն
ուշադրութեամբ հետևում էր ուսուցչի և ընկե-
րի մատններին. օր օրի վրա առաջադիմում
էին: Անցան տարիներ. մենք երկուսով արդէն
երրորդ դասարանումն էինք, իսկ մեր դրացու
որդին՝ վերջինում կամ չորրորդում: Դպրոցում
աւանդած առարկաները, կենքի փոքրիկ փոք-
րանք ընդարձակել էին մեր աշխարհայեցողու-
թիւնը և հիմնովին փոխել մեր մտածողութեան
եղանակը: Բացի դրանից՝ մէկ կողմից գրեթե ըն-
թացանութիւնը, միւս կողմից բարձր դասա-
րանների հետ ունեցած վիճաբանութիւնը մի

աջող դասընթացը աւարտողներին, իսկ
պարագիծներին այցելութիւնների թիւը
հասնում է 221,000-ի: Անգլիայի չորս
համալսարանները միասին, ըստուհինգ
տարեկան մէջ, ծախսել են մինչև երեք միլիոն
լուբլի գումար ժողովրդական համալսա-
րանների վրա:
Ժողովրդական համալսարանի դադափա-
րը այժմ ամենաբարձր դադափարներից
մէկն է դարձել այն մարդկանց համար, ո-
րոնք ոգևորված են ժողովրդի մէջ գիտու-
թիւններ տարածելու և ժողովրդին շրջա-
պատող խաւարից ազատելու հարցով: Եթէ
Ժողովրդին ինքը անկարող է համալսարան
գնալու կամ համալսարանական մասնագի-
տական դասախօսութիւններն ըմբռնելու,
այն ժամանակ թող համալսարանն
ինքը գնայ Ժողովրդի մէջ և յար-
մարվի նրա հասկացողութեան աստիճանին:
Այժմ Ժողովրդական համալսարանը յաճախ
հիմնվում է մի փոքրիկ քաղաքում և նոյն
իսկ աւանում, որտեղ խմբված է ժողովրդի
մեծ բազմութիւն: Ընդարձակ դահլիճում
պրոֆեսորներ և գիտութեամբ պարագիծ
անձինք դասախօսում են կանոնաւոր կեր-
պով ընտրելով այնպիսի օրեր և ժամեր,
երբ Ժողովրդը կարող է յաճախել դասա-
խօսութիւններին:

Ռուսաստանում ևս Ժողովրդական
համալսարանի սկիզբ է դրված, սա-
կայն նա դեռ սահմանափակված է մի քա-
նի քաղաքներով: Մանկանքը, որ այդ օգ-
տաւէտ և համակրելի գործի քառանկյուն
ամենայ յօբնեանը, որ կատարում է Կեմ-
բրիջի համալսարանը, ոգևորի ամենքին ի-
րականացնելու Ժողովրդին լուսաւորելու
այս նոր դպրոցը մեր պետութեան զանա-
զան անկիւններում:

Քանիտի մէջ դարգացրել էր քննադատական
ոգին այն չափով, ինչ չափով հնարաւոր էր ա-
շակերտին այն ժամանակվայ պայմաններում:
Մեր վիճաբանութեան նիւթը կազմում էին
գլխաւորապէս դասերը և ուսուցչիները վերա-
բերմունքը դէպի աշակերտները:

Սկսած առաջին դասարանից մինչև չորրորդ
դասարանի աշակերտները յայտնում էին ան-
վերջ գանգատներ ու դժգոհութիւններ: Գոհ
ինձ համար անտանելի էր, երբ աշակերտը դաս
պատասխանելիս սխալվում էր թէ չէ, իսկոյն
ուսուցիչը կիւռ և ծաղրական խօսքեր էր չար-
տում: Դաս պատասխանողն ինչն իրան կորց-
նում, մոլորվում էր. սխալ սխալ յետեւից: Ինչ
անհնր, թէ աշակերտը սխալվում է. արեւօք
կարելի չէ հանդարտութեամբ ուղղել, և միթէ
արժանի էր աշակերտի հոգեյին չարտեմ այս-
պիսի խօսքեր՝ դժուար, յիմար, գլխոււմ
մի մտխալ խելք չկայ... Մէկ ուրիշ գան-
գատվում էր, թէ ինչպէս թեթեւ սխալ անելու
դէպքում աշակերտի ակամայեքալը, ապաւնելը,
գլուխը դրաւաւաւաւաւաւաւ և կամ պատին խփելը,
քանոնի հարուածները տալը սովորական պատիժ-
ներ էին: Երրորդը վրդովված պատմում էր, թէ
քանի անգամ ամենայնպէս պատճառով դասը
պատասխան չը լինելով ենթարկվել է և՛ ֆի-
զիկական պատիժ, և՛ այս տեսակ անպատեհների,
օրինակ՝ եղ, ի՛նչ գլուխ: Զորքորդը յուզված
կերպով ասում էր, որ իր դանդաղ ու մատամբ
կակաղ խօսակցութիւնն անգամ դասարանում
դարձել է ծաղրի ու ծանակի առարկայ ուսուց-
չի հնորհիւ:

Այս բոլորը ոչ միայն հակամակաւորական,
այլ տմարդի բաներ են: Դրանք պարզ և գուցէ
չառ անգամ ծամածած ճշմարտութիւններ են,
այնու ամենայնիւ կան հաստատողներ, որոնք
ոչ ուղում են հասկանալ և ոչ էլ ընդունալ են
հասկանալու: Կենքի մէջ գործադրվող այդ
անքան վրդովեցուցիչ չէ, որքան վրդովեցու-
ցիչ է դառնում, երբ մի և նոյն բանը կատար-
վում է դպրոցում, մի հիմնարկութեան մէջ,

ԱՆԱՉԱՌ ՔՆՆՈՒԹԻՒՆ ՆԵՐՔ ՊԱՆԱՅՈՒՄ

Կ. Պօլսի ազգային հիւանդանոցում տեղի ու-
նեցած ցաւալի և անբարոյական դէպքը, որ ե-
րևան է եկել պատահաբար, այնպիսի զգուշի
իրողութիւններ և զեղծումներ է լոյս աշխարհ
հանել, որ պարզ ցոյց է տալիս, թէ այդ գործերի
դէպքերը ոչ թէ բացառութիւններ են, այլ սո-
վորական երեւոյթներ: Այդ հիւանդանոցում, ուր
պատուաւորված են մօտ հազար որբեր և հիւանդ-
ներ, անդամաւորներ, որ Կ. Պօլսի հայոց կա-
րեւոր հաստատութիւններից մէկն է կազմում և
կանում է անազնի ծախք, այնպիսի անբարե-
կարգութիւն, հակողութեան այնպիսի բացակա-
յութիւն է տիրում, որ խեղճ որբեր և արհես-
տանոցներում բանող պատանիներ մէջ զանա-
զան զուկելի արտեր են տարածվում և, որ ա-
մենազուկելին է, այդ արտերը փոխանցվում են
նրանց հիւանդանոցի պաշտօնեաներից... Եւ
այդպիսի զգուշի դէպք տեղի է ունենում այն-
տեղ, ուր կայ հայոց պատրիարք, պատրիարքա-
րան, քաղաքական, կրօնական, դատաստանա-
կան վարչութիւններ, վերջապէս հիւանդանո-
ցի հոգաբարձութիւն և տեսչութիւն, ուր տաս-
նեակ բժիշկներ անազնի ուժիկներ են ստա-
նում, ուր կայ մամուլ, ինտելիգենտ հասարա-
կութիւն:

Դէպքն արձանագրված և հաստատված է
պաշտօնական քննութեամբ և այնքան ակնյայտ-
նի, որ հիւանդանոցի վարչութեան անդամները
հերքման ուրիշ եղանակ չեն գտնում, եթէ ոչ
յանցանքը միմեանց վրա դրել: Որբանոցի տե-
սուչը յայտնում է, որ դէպքը տեղի է ունեցել
հիւանդանոցում. հիւանդանոցի տեսուչը յայտ-
նում է, թէ՛ արհեստանոցում... Եւ Պօլսի հայոց
պատրիարքարանը, որ այնքան աղմուկ հանեց,
զայրոյթ արտայայտեց Զմիւռնիայում տեղի ու-
նեցած՝ Ֆերընի դէպքի առիթով՝ մի դէպք,
որ միանգամայն նուանում է ազգային հիւան-

որը ուրիշ պարտականութիւնների հետ միասին
կոչված է ոչնչացնելու այդ պակասութիւնները,
լաւ օրինակ դառնալու հասարակութեանը և
նրան բարոյապէս բարձրացնելու:

Հապա ինչ կասե՞ք ամբողջ հոգևոր ուսումնա-
րանում յայտնի այն ուսուցչի համար, որը դա-
սարան էր մտնում ընհատ ու դպրկացած դէմ-
քով. նրա ներկայութիւնը ոչ թէ ակնածութիւն
ու պատկառանք էր ազգու աշակերտներին,
այլ ընդհակառակը առաջ էր բերում աղմուկ,
իրարանցում: Նա վայր ընկած իր տեղում և
կամ դասարանում մանգալով բաւականանում
էր սրան, նրան ասելով՝ փոստ օ, աներես,
չաթ ու լեքեստան, և այն և այն: Միւս ուսու-
ցիչների դասին էլ երբեմն-երբեմն տեղին ծիւա-
ղում, ուրախանում էինք, բայց բոլորական. ան-
միջապէս գործին էինք անցնում. այն ինչ նրա
զայր ուղղելը մինչև վերջը աղմուկ էր, բարեւո-
նեան խառնակութիւն: Ինչքան ասեմ, որ նրա
դասին չէին կատարվում. թողա՞նք այն սուկալի
բաները, եւ կրթութեան աւելի թեթեւ համարվածնե-
րը. մեզանից ո՞վ չը գիտէր, որ նրա դասին
քերն էին իրանց տեղում մնում. միջանից ո՞վ չը
գիտէր, որ այդ մարդու դասին մինչև անգամ
կարգապահ աշակերտն էլ երես էր առնում:
Ինչքան այնքան թմրած, այնքան անյնդունակ էր,
որ նրա դրպանն էին անում փշրած կալիճ,
բարեւ, ոսկրներ, բայց այդ մարդը ոչ նկատում
և ոչ էլ զգում էր: Սա մի օրվայ բան չէր, կա-
տարվում էր միշտ զանազան փոփոխութիւննե-
րով: Այդ ուսուցչի անտարբերութիւնը, ընած
վիճակը այնքան յայտնի էր բոլորին, որ չարածը-
նի ու սրամիտ աշակերտներից մէկը նրա գրու-
թեան դասին մի անգամ փոխանակ զեղազրու-
թեան օրինակից արտագրելով՝ իր տեսարակի
մէջ գրում է նոյն ուսուցչի վրա մի մուրհակ և
ներկայացնում. նա որպէս թէ նայում է գրու-
թեան սխալներն ուղղելու համար և իր սովոր-
ութեան համաձայն ստորագրում է... Այդ ան-
դուրական դէպքը պատմութիւնը տարածվեց
նաև հասարակութեան մէջ: Ինչ ասել կուզէ՞
դա աշակերտական խաղ էր, ուրիշ ոչինչ, միայն

զանոցում կատարվող զեղծույթների առաջինը էր կարծում, ինչ է անում: Փոխանակ անմիջապես, ամենախիստ և ամենաանաչառ քննադատական բանալու և օրինական ծանր պատասխանատվության ենթարկելու յանցաւորներին, աշխատում է խնդիրը անուշ տեղ կապելը, գործը ծածկել՝ «ազգային խայտառակութեան» առիթ չը տալու համար: Այդ ոգորմելի լոգիկայով զեղծարարը հիմնարկութիւնը իր բոլոր եռանդով սակայն գործ է դնում կասկածելի կացութեանը հայ ժողովրդի առաջ բողոքականութեան և կաթոլիկների ձեռքով հիմնած ուրբանոցները, պատրուակ բռնելով Ֆերբինի դէպքը և կամ անաղին կուր մղելու հրէաների դէմ լուսաւորականութիւնը ընդունած մի հրէայ աղջկայ համար: Եւ չորսորդ փողոցային մասնուլը շօյում է պատրիարքարանի այդ անհերքելի, կամ ինչպէս ճիշդ է նկատել Կ. Պօլսի թղթակիցը, «մեղսակից անհոգութիւնը»...

Խիստ, անաչառ, անողբ ընդունելի, օրինակելի պատիժ յանցաւորներին, ասն ինչ ենք պահանջում և ինչ ենք սպասում հայոց պատրիարքարանից:

Բ Ի Ս Մ Ա Ր Կ

II

1847 թ.ին մտնելով քաղաքական և պետական գործունէութեան ասպարէզը, Բիւսմարկը արդէն 32 տարեկան էր: Սովորաբար, մեծ մշտները և հանձնարները դեռ մանկութիւնից որ և է բանով զանազանում են հասարակ մասկանացունքից, սակայն ինչպէս տեսնւմ գերմանական կայսրութեան աղաղայ հռչակաւոր կանցլէրը մինչև 32 տարեկան հասակը որ և է աչքի ընկնող գործ էր կատարել, որ և է արտակարգ ընդունակութիւն ցոյց չը տուց և ոչ ոք էլ չէր կարող գուշակել, թէ «խենթ» Բիւսմարկը կարող է աղաղայում տիեզերահռչակ գործիչի համբաւ ստանալ: Բիւսմարկ նկատուում էր միայն իբրև տիպիկական ներկայացուցիչ այն շրջանի և դասակարգի, որի մէջ ծնուել էր անցնել էր և որը կառավարում էր Պրուսիան. այդ պարտական իւր կէտերի շրջանի էր, աշխուական կառավարողների դասակարգը, որի վաղը ու բարձր այնքան վառ գոյններով նկարագրել է Նպիրհայնը: Պրուսիական իւնիկեր-աշխուականների դասակարգը միայն մի հաւատ ունէր, որը պաշտպանում էր իր արեան գնով և զէնքով. իւնիկեր-աշխուականները կոչւած են տիրել մնացած հասարակական բոլոր դասակարգերի վրա և վարել պետութեան ճակատագիրը եկեղեցու և կառավարութեան դաշնակցութեամբ: Այդ հա-

ցաւալին այն է, որ ուսուցիչը որքան ընկած պիտի լինէր, որ աշակերտները թող տային իրանց ազգային խաղ խաղալու նրա գլխին: Այս լուրն ընկաւ ուսուցչի ականջին էլ, դէս ու դէն ընկնելով պատուել տուց յիշեալ մուսուլման, կարծելով թէ իր վրայից սրբեց նաև բարոյական արատը: Սրբեք:

Գիտէք, ինչ է նշանակում ուսուցչի անտարբերութիւնը, կամ ինչ բան է քննատ մանկ դասարանի, փայտի և կամ փաղախի նման վայր ընկնող աշակերտների առաջ: Գիտէք, թէ այդ բոլորը ո՞ր էր տաճարում առաջնորդութեան կարծած մատող սերնդին: Մեր մէջ հետզհետէ թուանում էր աշխուղ ու սեր դէպի պարապմունք, մեր մէջ կամաց-կամաց ըլծանում էր պատուասիրութեան ու պարտաճանաչութեան զգացմունքը, մեր մէջ հանգչելու վրա էր նաև ուսուցիչի ոգևորվելու կայծը: Այժմ եմ հասկանում, որ նոյն ուսուցչի ամբողջ եռանդն արտայայտուում էր թղթակցի սեղանի շուրջը: Անքուն գիշերներ անցկացնող մարդու պատկեր: Այդ տեսակ մարդիկ ոչ միայն ոչինչ չէին սովորեցնում, այլ իրանց մարմնացած պակասութիւններով բարոյապէս փչացնում, ալլաղաւում են մատող սերնդին: Եթէ դպրոցում չը լինէին այն մի երկու արժանաւոր ու բարեխիղճ ուսուցիչներն էլ, աշակերտներին կեանքը կատարեալ անպատկառ կը դառնար: Այդ մի երկու ուսուցիչների բարի օրինակով և մեր ծնողներից ժառանգած առաւելութիւնների շնորհիւ աւարտել ենք դպրոցը՝ տանելով մեզ հետ սէր ու յարգանք դէպի այդ սրբավայրը, իսկ անհուն ատելութիւն դէպի վարձկան և անփոքթ ուսուցիչները: Աչքի առաջ ունեցէ՛ք նոյն ուսումնարանն աւարտած և կամ կիսատ դուրս եկած աշակերտների այն մեծ թիւը, որոնք ոչ միայն ատում են իրանց արձանագործ ուսուցիչներին, այլ մինչև անգամ չեն ուզում դպրոցի անունը լսել: Դեռ դա բաւական չէ, ուսումնարանից դուրս գալուց յետոյ ամեն կայ կտրված համաբերով իրանց պահում էին սանձարձակ, ատելի ուսուցչին փողոցում պատահելիս հազար ու մի տեսակ անխայի խօսքերով նրան կարծրացնում:

մտղում, որ ժառանգութեամբ Բիւսմարկ իւրացրել էր մօր կաթիլ հետ միասին, կաղնում է նրա ամբողջ գործունէութեան հիմնաքարը:

Սակայն այն պայմանները, որոնց մէջ Բիւսմարկ տղ կոխեց քաղաքական գործունէութեան ասպարէզը, ամենին նպաստաւոր չէին այդ համազման համար: Փաղաղական նշանաւոր փոփոխութիւններ և մասնաւոր 1848 թ.ի յեղափոխութիւնը նոր հոսանքներ, նոր յայտեր էին առաջ բերել ամբողջ Գերմանիայում, աղաւաճում էր մի հով սկսել էր փչել ամբողջ երկրի վրա: Մեր յօդուածի շրջանակը մեզ թող չէ տարիս երկար կանգ առնել այդ նշանաւոր շարժման վրա, բայց անհրաժեշտ է բացատրել այդ փրկարար շարժման գոնէ գլխաւոր բաղկիւնը, քանի որ առանց այդ բացատրութեան անկարելի կը լինի բնութեւնը Բիւսմարկի գործունէութեան ամբողջութիւնը:

Պրուսիայի թագաւոր Ֆրիդրիխ-Վիլհելմ III, նա, որի ժամանակ Պրուսիան ոտնակելի եղաւ Նապոլէոն I-ի դրօշից, խոստացել էր՝ փորձանքի դասն բաղկեցնել՝ չնորհել իր ժողովրդին սահմանադրական իրաւունքներ, իբրև վարձատրութիւն նրա կրած տառապանքների: Սակայն այդ խոստումը նա չիրագործեց, և երբ 1840 թ.ին գահ բարձրացաւ նրա որդի Ֆրիդրիխ Վիլհելմ IV, նա յիշեց հօր հանդիսաւոր խոստումն, որին ինքն ևս մասնակցել էր իբրև գահաժառանգ, ու կամեցաւ իրագործել այդ խոստումը: Առաջ նա հաստատեց ուժ գաւառական սէյմ, սահմանափակ իրաւունքներով, բայց արդէն այդ սէյմերի հաստատութիւնը յուզեց և խրախուսեց աղաւաճողական ձգտումները, իսկ երբ Թագաւորը 1847-ին հրովարտակ հրատարակեց, հրաւիրելով ուժ սէյմի ներկայացուցիչներին միացեալ լանդտագ գումարել Բերլինում, աղաւաճողական շարժումը ամբողջ Գերմանիայում լայն ծաւալ ստացաւ: Այդ աղաւաճողական դասակարգի գլխաւոր նպատակն էր միացնել գերմանական մանր պետութիւնները և ստեղծել մի հզօր գերմանական դաշնակցական-սահմանադրական կայսրութիւն՝ իրենց Աւստրիայի գերիշխանութեան իրաւունքը: Վիլհելմայի 1815 թ.ի կոնգրէսը գերմանական մանր պետութիւններին դաշնակցական ձև էր տուել, բայց ամեն մի փոքր պետութիւն կառավարվում էր միահեծան իշխանի կամ թագաւորի ձեռքով և ամբողջ դաշնակցութիւնը համարվում էր Աւստրիայի գերիշխանութեան տակ: Գաշնակցական-սահմանադրական գերմանական ընդհանուր կայսրութիւն ստեղծելու հայրենասիրական և աղաւաճմանական լայն շարժումն այն նշանաւոր արդիւն-

էին: Շատ ցատալ է բայց մեղաւորը ուսուցիչներն էին, ինչ որ ցանկ էին, այն էլ հինգ ու չէին: Գիտէք, թէ որքան անբախտ է ուսուցիչը, երբ նա սիրով ու համակրող սրտով չէ գտնում իր սաների մէջ: Առաւելից քեզ բերն է աշխուղում այդ սէյմ ու համակրութիւնը դրաւ զպրոցում և դպրոցից դուրս, դրա համար պէտք է անկեղծ սիրով նուիրված լինել իր պաշտօնին, սիրել մատող սերունդը՝ հայրաբար և ընդունակ լինել առարկան հետաքրքիր ու մատչելի դարձնելու:

Ինչ թաղցնեմ կարծիքս, դեռ պատանի հասակում ասել եմ, հիմա էլ աւելի գրական կերպով կրկնում եմ, որ Ա. քաղաքի հոգեւոր ուսումնարանը բարեփոխված խալիֆայական դպրոց էր, իսկ ուսուցիչները մեծ մասով սիւր-տուկաւոր-խալիֆաներ:

II

Անցան տարիներ: Մեղանից մի քանիսը միջնակարգ ու բարձրագոյն կրթութիւն ստանալուց յետոյ մտանք ուսուցչական ասպարէզ: Մի երկու ամսում ծանօթացայ դպրոցական կեանքի ու պաշտօնակիցներին հետ: Առանց չափազանցութեան կարող եմ ասել, որ այս դպրոցը նրան է արդէն 20 տարի առաջ Ա. քաղաքում եղած հոգեւոր ուսումնարանին: Դա ինձ տարափառ արաւ. մտածում էի՝ միթէ կեանքն այդքան դանդաղ է առաջ գնում: Չանցած մի ամիս՝ աշակերտները հետաքրքրվում էին աւանդաւորում էին: Որտեղից սրտով պաշտօնակիցները ունեն լցվելին չար նախանձով. ամեն տեսակ դարձանք լարում էին: Գիտեա ինչու, որովհետեւ դժբախտութիւն եմ ունեցել մատող սերնդին հայրաբար սիրել, առարկայովս հետաքրքրել և նրանց կողմից տեսնել սէր ու համակրութիւն: Այս բանը փոխանակ բարեբախտութիւն էր ինձ լինելու, երկու կողմի համար էլ դժբախտութիւն էր դառնում չար մարդկանց երեսից: Ե՛հ, ոչինչ, այդ տեսակ դժբախտութեան շատերն են զոհ գնացել և դեռ պիտի գնան: Առանց չեղելու պէտք է գործեմ, քանի հնա-

բն ունեցաւ, որ Ֆրանցֆուրտում հաստատվեց մի ընդհանուր գերմանական պարլամենտ՝ քննելու և մշակելու ապագայ միացեալ Գերմանիայի կազմակերպութեան վիճակը: Այդ պարլամենտը, ինքն ևս ենթարկվելով ընդհանուր շարժման ալիքներին, ստեղծեց մի գերմանական համագլխային ժողով, որը որոշեց առաջարկել ապագայ գերմանական կայսրութեան թագը Պրուսիայի թագաւորին: Արդէն 28 գերմանական մանր իշխանութիւններ ընդունել էին ազգային ժողովի այդ վճռական թայրը և պրուսական կառավարութիւնը, տեղի տալով աղաւաճողական հոսանքին, տրամադրել էր երևում իրականացնել բոլոր գերմանացի հայրենասէրների իղձն ու փափաքը, մանաւանդ՝ երբ աղաւաճողական շարժումը փոխվեց յեղափոխութեան, 1848-ին, նոյն իսկ պրուսական իւնիկները տողորվել էին աղաւաճողական և հայրենասիրական գործ էին համարում Ֆրանցֆուրտի ազգային ժողովի վճիռը: Սակայն մեք շուտով կը տեսնենք, որ գերմանական հայրենասէրների այդ իղձը չիրագործվեց զխաւրարակ Բիւսմարկի չնորհիւ, որը կատարի եռանդով կուրծ էր այդ շարժման դէմ և աշխատում էր տապալել այն մեծ գործը, որը 22 տարուց յետոյ պէտք է անմահացնէր նրա անունը: Այն, ինչ որ կարելի էր ձեռք բերել հեշտութեամբ 1848 թ.ին, Բիւսմարկ կործանեց և 22 տարուց յետոյ ինքը ձեռք բերեց սարսափելի զոհեր տալով...

Բայց դառնանք 1847 թ.ին, միացեալ լանդտագի բացման: Երկնաւորէին գաւառական պատգամաւոր պատանմամբ հիւանդ լինելով, Բիւսմարկին, իբրև կանդիդատի, վիճակվեց հանդէս գալ լանդտագում: Դէպքը պատահական էր, բայց նա վճռական ազդեցութիւն ունեցաւ Բիւսմարկի ապագայ գործունէութեան վրա: Նա ներկայացաւ լանդտագին և հենց առաջին քույրէից, իր առաջին ծառի մէջ, որ արտասանեց 1847 թ. մայիսի 17-ին, նա պարզեց իր դրօշակը և սաստիկ զինվեց ազգային ընդհանուր շարժման դէմ: Նա յայտնեց, որ թագաւորական իշխանութեան իրաւունքը աստուածային ծագումն ունի, այդ իրաւունքը անխախտ և անսասան է իբրև քրոնոզեալ ժաշու և ժողովրդի բոլոր իրաւունքների, բոլոր չնորհների արեւելին է. նա աղաւտ է որ և է պարտաւորութիւնից և չէ կարող որ և է պայմանաւորութեան մէջ մշտնել ժողովրդի հետ: Պրուսական թագաւորները ոտացել են իրանց իշխանութիւնը Ստոնուց, ուստի և պատասխանատու են միայն Աստուծաւ: Թագաւորին ուղղած ու է պահանջ ապօրէն է, ժողովրդական իրաւունքը, որ հակա-

րաւորութիւն ունեւ, քանի որ բերանումն չունէ կայ, հաւատարմով և համոզված լինելով՝ որ վերջապէս յաղթելու է ճշմարտութիւնը:

Բայց հետաքրքիր է իմանալ, թէ ինչու մինչև այժմ դպրոցի դռները բաց են մնացել սրտուրակաւոր-խալիֆաների առաջ, արդե՞րք դրան նպաստել է միմիայն կեանքի դանդաղ առաջագիծութիւնը, թէ մէկ ուրիշ պատճառ էլ կայ: Այս հարցերին կը պատասխանեմ փաստերով: Ինձ աշուղդեց մի ուրիշ դպրոցում էլ ուսուցիչ լինելը, բարեբախտաբար թէ դժբախտաբար այնու տեղ էին մեր նախկին ուսուցիչներից մի քանիսը՝ ի միջի այլոց և նա, որը վայելչագործութեան օրինակի փոխարէն իր վրա գրված մուսուլման ստորագրեց ընած ու թմբած վիճակի մէջ: Նրա բոլոր դասերն այնպէս անկարգ էին անցնում, ինչպէս հոգեւոր ուսումնարանում: Կային նրա նման ուրիշներն էլ, որոնք ուսուցիչ էին պաշտօնապէս, իսկ գործով վարձկան ու անբարեխիղճ ծառաներ: Այս դպրոցում էլ տիրում էր նոյն խալիֆայական սիւտէնը. ծեծ, ծաղր ու արհամարհանք դէպի աշակերտներին անհատականութիւնը: Եթէ մինչև այժմ սիւրբուրակաւոր-խալիֆաներ գոյութիւն ունեն մեր դպրոցներում, դրա պատճառը կեանքի դանդաղ առաջադիմութիւնը չէ: Տեսէ՛ք թէ սրանից մօտ 20 տարի առաջ ինչ էր ժողովուրդը և ինչ է այժմ, տեսէ՛ք, թէ որքան փոխվել է նրա նիւտ ու կայք, նրա բարքը, որքան բարդվել են ժողովրդի պահանջները՝ որ որոշ դարգացման հետեանք է: Այն, կեանքը կամաց-կամաց է առաջ գնում, բայց անշարժ չէ, նա անհամեմատ փոխվել, առաջագնաց է, իսկ դպրոցները ոչ այնքան: Ինչու, որովհետեւ վարձկան ու անբարեխիղճ ուսուցիչներ կրթական ասպարէզում պահվել և պահվում են խնամական կապերով ու մանր-մուկն հաշիւներով: Ահա թէ որտեղ է դադարել, որ դպրոցները բարեփոխութիւններն ու վերանորոգումներն կողմից չափազանց յետ են մնացել:

Սակայն ուրախվել է, որ փորձերը ցոյց են տալիս, թէ հետզհետէ համակրող սրտեր են դուրս գալիս բարեխիղճ ու խելացի պաշտօնա-

դրվում է արքայական իրաւունքին, միայն անբողմարդակ խօսք է: Նա ասաց, թէ ինքը երկուշ չունի, որ իրան կանուանին խաւարամիտ, օրսկուրանտ, ընդհակառակը նա պարծնում է որ սրբութեամբ պահպանում է «միջնադարեան օրսկուրանտիկի» այդ նախապաշարունները: Նա ընդունում է սահմանադրութիւնը միայն այն պայմանով, որ թագաւորի կամքը համարվի միշտ օրէնք:

Իսկ երբ լանդտագում խօսք ընկաւ հրէաներին աւելի լայն իրաւունքներ տալու մասին, Բիւսմարկ վճռական կերպով դիմադրեց այդ առաջարկութեան: Նա ասաց, որ միապետական կառավարութեան հիմքը կարող է լինել միայն քրիստոնէական և հրէաներին չէ կարելի ու է պետական պաշտօն յանձնել: «Երբ ես մտածում եմ — դուք նա — որ թագաւորի սրբական անձի ներկայացուցիչը կարող է լինել մի հրէայ և ես տոկոլված պէտք է լինեմ հնազանդել հրէային, ես ինձ զգում եմ սարսափելի նուաւտացած և չեմ կարող արժանապատուութեամբ ծառայել պետութեան»:

Ահա այդ ճառերով Բիւսմարկ սկսեց իր պարլամենտական գործունէութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԺՈՒՄ Ե ԶԱՒԱՏԱԼ (Նախկին Խմբագրութեան)

«Փնոք Բեկ, Աստուած, որ ես այս մարտաւորի նման չեմ», արժեքում էր փախուցելին: Ո՛վ հաւատաց: Ոչ ոք: Ժիշդ այդպէս, կարծում ենք, ոչ ոք չի հաւատաց «Մշակի» № 121-ի մէջ տպած՝ ուսանող Լ-ի «Երան ճշմարտութիւններ» խոստովանութիւնը, որը ոչ մի բանով չէ դաժնազանվում վերջ յիշած արժեքից: Շատ ենք լսել այդ դասն ճշմարտութիւնները, շատ հաւատացել, սպասել... Ինչ է ուղում աւել ուսանող-յօրուածագիրը: Առանդուլութիւն ընկած է: Լաւ: Բայց ինչու մինչև այժմ լուել էր, ինչու դպրոցական նոտարանը թողնելուց, ուսանող պատուին էլ արժանանալուց յետոյ, եթէ միայն այդ դասակարգի փաղաքած, ընկած լինելը ձեզ դադարեցրել է, հարցնում ենք, ինչու մինչև այժմ լուել էր և ձեռք գրելով չէիք հարուածում այդ լուրջկեցուցիչ բեղերը: Միթէ ձեռք չըջանում գէթ մի փոքրամասնութիւն չը կար, որը առանձնաւոր այդ ընդհանուրից, զբաղվէր ուսանողական ներկայ կենցաղով, քննադատէր նրա բռնած ամօթալի ընթացքը: Պարզ է, որ ոչ դուք և ոչ մի ուրիշը մասին արդ կերպով չէք մտածել: Իսկ այժմ, երբ հարուածներ են

կիցներէ: Որոշ ծրագրով գործող ուսուցիչները, ուր էլ լինեն, իրանց կողմն են դրաւում մատաղ սերնդի և հասարակութեան լուրջ մասի անկեղծ սէրն ու համակրութիւնը: Սրանք այն տեսակ յաղթանակներ են, որոնց առաջ սիւրբուրակաւոր-խալիֆա-վարձակներն ինքժոններն անգամ կօպէկ չարժեն: Խալիֆա-վարձակները տեսնում են, որ իրանց վարկն ընկած է դպրոցում, հասարակութեան մեծամասնութիւնը վաղուց երես է դարձրել. նրանք լաւ են հասկանում, որ իրանց օրը կամաց-կամաց սեւանում է, զգում են իրանց անպիտղելութիւնն ու մտաւաղտ անկումը: չը նայած այդ բոլորին՝ երեսի դուռը դեռ չարունակում են մնալ կրթական ասպարէզում, զո՞հ բերելով մատաղ սերնդի մտաւորն ու բարոյականը իրանց ետական շահերին: Նրանք գլուխները կորցրած խղճով գոյութիւնները պահպանելու համար զրպարանութիւնները կարկտի նման թափում են այն մարդկանց զլխին, որոնք դէմ են նրանց հակամաքակաւորական սիւտէմին և սանձարձակ կամայականութեանը: Այդ մարդիկ հոգեաբար մէջ լինելով օրհասական կուր են մղում: Դուք ասե՛ք, թէ տեղ-տեղ այդ խալիֆաները զօրեղ են: Դա ըստ երևոյթին է զօրեղութիւն. ներսից ցեցը ուսում է. նրանք հնազանդ ու խալիֆալ ոյժ են և անհամապատասխան ժամանակակից պահանջներին: Այդ խալիֆալ չէ՛ք պահպանում է վերջ յիշած խնամական կապերով. ասն նրանց ոյժն ու զօրութիւնը:

Անցաւ իսկական խալիֆաների շրջանը. եկաւ բարեփոխված խալիֆայութիւնը. այժմ էլ սիւրբուրակաւոր-խալիֆաների հոգեաբար շրջանն է: Կրկնում եմ, անբարեխիղճ ուսուցիչները դանդաղ, բայց հաստատ կերպով: Շարունակենք առանց հիստիալիստիկ գործել եռանդով. միշտ հետեւենք գիտութեան ու կեանքի մշակած նորանոր պահանջներին: Հեռու մնանք ներկայ խալիֆաների անշարժութիւնից և պապական անխաղաղութեան յաւաքութիւնից: Նրանց անկումը մօտ է: Ապագան անհուշէր ուսուցիչներին է:

կարող ենք վերջացնել մեր աշխատությունը...
Նա չեմ ուզում տեսնել ձեզ կուրացած յաղթու-
թեան կրքերով և հպարտացած այդ կեղծ մնա-
պարծութեամբ: Նա չառ լաւ մարդկանց փա-
ցրեց: Մի մոռանալ, որ թէև սուրբ լաւ է պա-
տերազմի ժամանակ, բայց բոլորովին անպէտք է,
երբ դարձիս և խաղաղ ժամանակը: Դուք պիտի որ-
քան կարելի է շուտ հաստատէք քաղաքացիական
վարչութիւն: պատերազմական օրէնքը չափա-
զանց կոպիտ է խաղաղ ժամանակի համար...
Մենք պարտաւոր ենք ինքներս կառավարել
մեզ: Յոյս տանք Միացեալ-Նահանգներին և ամե-
րոյ՝ աշխարհին, թէ մենք կարող ենք մեզ վրա
վերցնել ինքնավարութեան պատասխանատու-
թիւնը: Աշխատենք, որ անաղիւթեան չը հան-
դիպենք և ստիպված չը լինենք դիմել ամի ազ-
գին, որի ազնիւ օգնութիւնը տալիս է մեզ ան-
կախութիւն: Ինչ վերաբերում է ինձ, եթէ ես ողջ
կը մնամ մինչև որ կը տեսնեմ անկախ և ինքնա-
վար Կուբան, այն ժամանակ ես երջանիկ կը
լինեմ իմ թանկագին հայրենիքի որ և է խուլ
անկիւնումս:

Մի կարճ միջոցից յետոյ մենք կը տեսնենք
թէ որքան արդարացի են ձերոնք իդէալիստի
յոյսերը...

Ամերիկացիներն այժմ աշխատում են ջրից
հանել Սեբիլեայի կործանված նաւերը և նորից
կարգի բերել: Հաւատացնում են որ մի քանի
գրահանաւոր կարելի է նորոգել և գործ ածել:
Եթէ այդ ձևով լինի, ամերիկացիները մեծ հա-
րատութիւն ձեռք կը բերեն. Սեբիլեայի նաւա-
տորմը 100 միլիոն ֆրանկ արժէ. յոյս ունեն
աղաւթն մանաւանդ «Cristobal Colon» գրահա-
ւորը, որ գնահատվում է մօտ 3 միլիոն դոլար
(6 միլիոն ռուբլի):

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրիլայինեան կղզիները ապստամբներն ար-
դէն հրատարակել են անկախութիւն և կազմել
միջխորհրդակցութիւն: Նախագահ ընտրվել է Ազվի-
նալոս:

—Կրետէի ազգային ժողովը, որին սուլթանը
համարում է ապստամբական և յեղափոխական
մի հաստատութիւն և որին ծովակալները յանձ-
նել են կղզու ներքին կառավարութիւնը, յայտ-
նել է եւրօպական հիւպատոսներին, թէ մու-
սուլման ընկալիչները վերադարձը միայն այն
ժամանակ կը թողարկուի, երբ թիւրքաց զօրքե-
րը թողնեն կղզին: Իսկ մուսուլմանները դիմե-
լով եւրօպական մեծ պետութիւններին յայտ-
նում են մի ընդարձակ աղբյուրագրով, թէ իրանք
անմեղ են կղզու վրա ծագած խռովութիւնների
և անկարգութիւնների մէջ:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՅՑ

ԱՄԵՐԻԿԱ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 20 յուլիսի: Միջխորհրդակցութիւն
խորհրդում քննվում էր Փիլիպպինեան կղզիների
ինքնավարութիւնը: Որոշվեց խնդրել բաց թողնել, որով-
հետեւ նա կարող է լուծվել ապագայում ամերի-
կո-սպանիական յանձնառուողի ձեռքով: Խա-
ղաղութեան հիմքերին վերաբերեալ պիտի լինի
կանոնադրական ընդունելի հետեւեալ կէտերը. 1) Ա-
րեւմտեան-Հնդկաստանի սպանիական բոլոր կղզ-
իները վիճումը, բացի Կուբայից. 2) Սպանիային
զբաղեցնող վեհապետական իրաւունքներից Կուբա
կղզու վրա. ամերիկացիները կօնտրոլի իրաւունք
պէտք է ունենան կղզու վրա, մինչև որ այն-
տեղ կազմակերպվի կառավարութիւն: 3) Մա-
րիանեան կղզիներից մէկի վիճումն ածխային
կայարան հիմնելու համար և, զուգե, նաեւ Կա-
րօլինեան կղզիներից մէկը նոյն նպատա-
կով: 4) ամերիկացիները յանձն չեն առնում
Կուբայի պետական պարտքը վճարելու: 5)
պատերազմական ծախսերի համար ամերի-
կացիները ոչ մի վարձատրութիւն չեն պա-
հանջում: 6) խաղաղութեան պայմանները որո-
շելը յանձնվում է ամերիկո-սպանիական յանձ-
նաժողովին, այն պայմանով, որ սպանիական
զօրքերը անյապաղ թողնեն Կուբան և Պորտո-
Րիկոն:

Գեմէյի հեռագիրը, որ ստացվեց նիստի ժա-
մանակ, էականապէս նպաստեց Փիլիպպինեան
կղզիների վերաբերեալ կէտի լուծման: Հեռա-
գրում ասված է. «Լուրջ նշաններ կան, որ ան-
հրաժեշտ է կռուել ապստամբների հետ: Այդ
դէպքում, պէտք է զանազան կղզիներում
150,000 զօրք ափ իջնենք»:

ՄԱՐԻԻԻ, 20 յուլիսի: Լրագիրները հաղոր-
դում են, որ 300 կաթիլիստների մի հրոսակա-
խումբ է երևացել Սիուդ-Ուրգելի շրջակայքում:
Ջօրք է ուղարկվել հալածելու նրանց:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 20 յուլիսի: Ներքին, նախագահի,
Գէյի (արտաքին գործերի մինիստր) և Ֆրան-
սիական դեսպան Կամբոնի մէջ կայացած խորհ-
րակցութիւնը ամենակարեւոր նշանակութիւն ու-
նեցաւ, որովհետեւ նա առաջացրեց խաղաղու-
թեան նախնական պայմանների որոշումն: Այժմ
մնում է միայն, որ Սպանիան վաւերացնի այդ
նախնական պայմանները: Երբ Կամբոնը լուրջ
առարկութիւններ առաջ բերեց, նախագահը և
Գէյը համաձայնեցին փոխել ամերիկական պայ-
մանների մի կէտը, որ դեռ անյայտ է: Կամբոն
հաղորդեց խորհրդակցութեան արդիւնքը Մադ-
րիդ ի հաստատութիւն:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 20 յուլիսի: Բուսինական թա-
ղաւորը և գահաժառանգը Նոյա Մեծութիւննե-
րի հետ, առաւօտեան ներկայ եղան եկեղեցում,
Ալեքսանդրիայում, ժամատացութեան, ապա դը-
նացին Պետերսօֆի պալատը, ուր ժամը 1-ին
տեղի ունեցաւ Նախագահի Նախագահից յետոյ
թագաւորը և գահաժառանգը հրաժեշտ տուին
Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդօրովնա-
յին, յունաց թագուհուն, Մեծ Իշխաններին և
Իշխանուհիներին և մեկնեցին ժողովար: Թա-
գաւոր Կայսրը ճանապարհ դրեց թագաւորին և
գահաժառանգին մինչև ժողովար, ուր հաւաքվել
էին Կայսերական ընտանիքի բոլոր անդամները:
Ժամը 2¹/₂-ին գնացը մեկնեց Մոսկւա:

ՀԱՄԲՈՐԳ, 20 յուլիսի: «Hamb. Nachrichten»
ասում է. «Ուրբաթ Բիսմարկի առողջութիւնը
համեմատաբար գոհացուցիչ էր: Երբեք առա-
ւօտեան իշխանը լրագիրներ էր կարդում, խօ-
սում էր քաղաքականութեան մասին, ուսումն
լսում էր: Յանկարծ, թղթերի յանկարծական
հիւանդութեան պատճառով, նա վատ զգաց ի-
րան: Ճաշից յետոյ իշխանը մի քանի անգամ
կորցրեց ուշքը: Երեկոյեան, յուրիշ նշաններ
յայտնվեցին: Մահը վրա հասաւ մօտ ժամը
11-ին, հեշտ, առանց տանջանքի: Մահվան ան-
կողմու շուրջը հաւաքվել էին ընտանիքի բոլոր
անդամները և փոքր ինչ առաջ հասած Շվեյցի-
զերը ու Կրիշտիանը: Բիսմարկի վերջին խօս-
քերն ուղղված էին Նանցաու կոմսուհուն, որ
չփում էր նրա ճակատը. «Հնդերակալ եմ, դա-
ւակաւ: Իշխանը պառկած է. կարծէք քնած լի-
նի. դժմը արտայայտութիւնը խաղաղ է»:

ԲԵՐԼԻՆ, 20 յուլիսի: Ներքին, նախագահի,
Գէյի (արտաքին գործերի մինիստր) և Ֆրան-
սիական դեսպան Կամբոնի մէջ կայացած խորհ-
րակցութիւնը ամենակարեւոր նշանակութիւն ու-
նեցաւ, որովհետեւ նա առաջացրեց խաղաղու-
թեան նախնական պայմանների որոշումն: Այժմ
մնում է միայն, որ Սպանիան վաւերացնի այդ
նախնական պայմանները: Երբ Կամբոնը լուրջ
առարկութիւններ առաջ բերեց, նախագահը և
Գէյը համաձայնեցին փոխել ամերիկական պայ-
մանների մի կէտը, որ դեռ անյայտ է: Կամբոն
հաղորդեց խորհրդակցութեան արդիւնքը Մադ-
րիդ ի հաստատութիւն:

ՄՈՍԿՎԱ, 21 յուլիսի: Այստեղ հասաւ ռուսի-
ական թագաւորը թագաժառանգի հետ:
ԲԵՐԼԻՆ, 21 յուլիսի: Իշխան Բիսմարկի վեր-
ջին կամքը համաձայն, նրա մարմինը կը թաղվի
Ֆրիդրիխսբուրգում, այդ պատճառով իշխան Հեր-
բրտ Բիսմարկի չորսակալութեամբ հրաժարվեց
կայսեր առաջարկից՝ մարմինը Բերլինի տաճա-
րում թաղելու:

ԲԵՐԼԻՆ, 21 յուլիսի: «Reichsanzeiger»-ի մէջ,
որ լոյս տեսաւ սե չըմանակով, տպված է կայ-
սեր հեռագիրը՝ ուղարկված իշխան Հերբերտ
Բիսմարկին. «Մասնակից լինելով խորը վշտին,
որին ենթարկվել էք դուք՝ թանկագին և մեծ
մարդու մահվամբ, ես ուրբա եմ՝ որ Գե-
մանիան կորցրեց իր մեծ զաւակին, որի հաւա-
տարմութիւնը և մասնակցութիւնը հայրենիքի
միացման գործում՝ ձեռք բերեց իմ հանդուցեալ
պապի, մեծ կայսեր բարեկամութիւնը մինչև մա-
հը, այլ և ամբողջ գերմանական ժողովրդի անդի-
շելի երախտագիտութիւնը ընդ միշտ: Նրա ա-
ճիւնդին ես տեղ կը տամ Բերլինի տաճարում,
իմ նախնիների աճիւնդի կողքին»:

ՀԱՄԲՈՐԳ, 21 յուլիսի: Իր սեփական ձեռ-
քով ստորագրած կտակի մէջ Բիսմարկ յայտնել
է, որ ցանկանում է թաղվել իր ցոյց տուած
տեղում, Սակսենալանդում, իսկ վերջում աւելաց-
նում է. «Յանկանում եմ՝ որ գերեզմանի վրա
գրված լինի՝ «Իշխան Բիսմարկ, ծնվեց 1815 թի
ապրիլի 1-ին և մեռաւ...»: Դրան պէտք է ա-
ւելացնել՝ «Հաւատարմի գերմանացի ծառայ
կայսր Վիլհելմ I-ի»:

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔՈՒՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵՅ ԱՍԱՐԻՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԿԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերից:

Ա. Ռ. Ա. Ի. Օ. Տ. Ե. Բ. Ը.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, վերականգնող (սիֆիլիս) և միզառեւ. հ.
Գ. Մ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդային հ.

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԲՈՒԴԵՆԿՈ—10¹/₂—11¹/₂ ժ.:
կանանց և երեխայից հ., ծաղկի պատուա-
ստան:

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11¹/₂—12 ժ. կա-
նանց հիւանդ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1¹/₂ ժ. ներքին և
երեխայից հ.

Ա. Գ. ԳՈՐԿՈ—1¹/₂—2¹/₂ ժ. ներքին, և մի-
զատեական հ. ախանջի, կոկորդի և քիթի հ.

Ե. Բ. Կ. Ն. Ե. Բ. Ը.

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՅԵ—6—7 ժ. ներքին և երե-
խայից հ. նեարդային և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆ—6¹/₂—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՈ հիւանդանոցում քիմիական
և խոշորացուցական հետազոտութիւններ է ա-
նում մէկի, իրի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի
(կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին
Հիւանդանոցի վերադասում:
148—150 Բժշկական ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ
յայտնում է ի գիտութիւն ընդհան-
րութեան, որ կեղտառեղերը մաքրելու և անմաքրութիւնները դուրս տանելու համար
սահմանված կանոնների § 13-ի ծանօթութեան համաձայն, կեղտառար տակառա-
կառքերի ՑԵՐԵԿԱՆ ԵՐԹԵԿԵՆԻՍԻՆԸ ԹՈՂ չէ տրվում հետեւեալ փողոցներով. Կոյո-
վինսկի, Դօրոցօվայա, Միխայլօվսկայա, Բարիատինսկայա, Երեւանեան հրապարակ, Մի-
ջին փողոց, և Սիւնի փողոց, մինչև Մէյդանը:

ԹԻՓԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

յայտնում է ի գիտութիւն Թիֆլիսում գտնվող անշարժ կայքերի տէրերին,
որ դուռնայի այս տարվայ մարտի 2-ի որոշմամբ, ներկայ 1898 թվի համար սահման-
վել է ԼՐԱՑՈՒՑԻՑ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՏՈՒՐԻՔ, կառուածքի գնահատութեան 10⁰/₀-ի չափով,
որը կը կազմի սովորական գնահատական տուրքի 1¹/₁₂ մասը: Կայացուցիչ տուրքը վճա-
րելու ժամանակամիջոց նշանակվում է յուլիս ամիսը: Յուլիսից յետոյ տեղի ունեցող
վճարումների համար կը վերցվի տուրքաւոր, գնահատական տուրքի համար որոշ-
ված քանակութեամբ:

ԵՐԵԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՌՈՐ ԴՊՐՈՑԻ Հոգաբար-
ձութեան որոշման համաձայն յայտնում եմ, որ առաջիկայ 1898—99 ուսման տար-
վայ համար ընդունվում են. 1) Կարող մտնող աշակերտների խնդիրներ մինչև սեպ-
տեմբեր ամսի մէջը. և խնդիրների հետ պիտի անպայման ներկայացվեն ծննդա-
կան և ծագչի պատուաստման վկայականներ, առանց որոնց խնդիրները կը մնան
առանց հետեւանքի. և 2) Աշակերտներ ընդունվում են առաջին նախակրթարանում և
գ. դ. ե. գ. դասարաններում:
2—2 Պաշտօնակատար տեսչի՝ Ս. Տէր-Գաբրիէլեանց

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Յ. Խ. Ք Օ չ ա թ ե ա ն ց ի

Տեղափոխվել է Նիկոլաեվսկի փողոց, № 19, ա. Շանշեանցի՝ յարմար բնակարան,
կամքին մօտ: Պատրաստում է վերաբնութիւնների և քննութիւնների համար: Ա-
ւանդվում են և գերմաներէն, ֆրանսերէն ու լատիներէն լեզուները:

1—1

ՆՈՒՆԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ի Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՍՆԵՐՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով
հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկայը սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտ-
րական Քառասնութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Քառասնութիւն համարիչ վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն,
6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղարվեստութիւն, վատ
ձեռքի ուղղվել:

Աւսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի
1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև
8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում: Սոյալակում, Ալեքսանդր Փրիզմովի
տանը, № 9, Սերգիեվսկայա և Նազորնայա փողոցների անկիւնում: Մրաքիրը և
կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Մովսիսեանների բանկային
գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում
են՝ Թիֆլիս, Ս. Ս. Մանուէլյանց. (չ. շ.) 12—25